

Ի՞նչ են պատմում մանկական նկարները

Ցանկացած մանկական նկար կարող է պատկերել այն ամենը, ինչ կատարվում է երեխայի հոգում, որը նա չի կարող բացատրել մեծերին նույնիսկ ամենամտերմիկ գրույցի ժամանակ:

Փոքրիկը մի քանի րոպեում թղթի վրա կարող է պատկերել շատ հետաքրքիր պատկերներ: Այդ նկարներում շատ կարևոր ու հետաքրքիր բաներ են թաքնված թե՛ երեխայի, և թե՛ ծնողի համար: Երեխան կարող է պատկերել իրեն՝ տարօրինակ դիրքով, առանց դեմքի ու մինչև ատամները գիսված: Նշանակում է, երեխան պաշտպանության կարիք ունի: Միգուցե ինչ-որ մեկը նրան նեղացրե՞լ է: Կամ նկարում երեխան մահճակալի մեջ է: Նա հանգստի կարի՞ք ունի, իսկ միգուցե հիվա՞նդ է:

Տարիքային առանձնահատկությունները



Նկարը երեխայի համար ոչ թե արվեստ է, այլ խոսք: Մինչև երեք տարեկանը երեխայի նկարները պարզապես գծեր են, շրջաններ ու խզբզոցներ: Այդ տարիքում փոքրիկը ծանոթանում է մատիտի կամ վրձնի հետ, փորձեր է անում: Չորս տարեկան երեխայի պատկերն արդեն իմաստ ունի: Փոքրիկ նկարչին հիմնականում ոգեշնչում են մարդիկ՝ մայրը, հայրը կամ հենց ինքը՝ երեխան: Նկարի վրայի մարդիկ հիմնականում պատկերվում են «ոտուզլուխ» տարբերակով՝ արարածներ, որոնց մարմինն ու գլուխն ընդհանուր մի շրջան է, որն ունի ոտքեր:

Երեխայի նկարները կարելի է վերլուծել սկսած 4-5 տարեկանից: Այդ

տարիքային սկարների մարդուկն արդեն բաղկացած է երկու օվալներից, մատներ ունեցող ոտքերից ու ձեռքերից: Արդեն հետաքրքրություն է առաջանում տարբեր գեղամուկների, առարկաների ու շրջապատի սկատմամբ: Յոթ տարեկանում փոքրիկ սկարիչն արդեն իր պատկերի մեջ ներառում է այնպիսի մանրուքներ, ինչպիսիք են գլուխը, մազերը (կամ գլխարկը), հագուստը (դեռևս ուրվագծերի տեսքով), իսկ ոտքերն ու ձեռքերն արդեն պատկերվում են երկու գծերի տեսքով: Դա արտահայտում է երեխայի համաչափ զարգացումը:

Սկարի կառուցվածքը



Երեխային առաջարկեք սկարել իր ընտանիքը: Ընդ որում այնպես, որ ընտանիքի բոլոր անդամները զբաղված լինեն ինչ-որ բանով: Երեխան պետք է ունենա գունավոր մատիտներ ու մեծ թուղթ (սովորաբար ալբոմի թուղթը կամ A4 չափի գրասենյակային թուղթը պետք է բավարարի): Պետք է երեխային շտապեցնել կամ մեկնաբանել սկարը սկարելու ընթացքում: Իսկ երբ երեխան կվերջացնի ընտանեկան պատկերը, ճիշտ ժամանակն է երեխային հարցեր առաջարկել. ո՞ւմ է սկարել և ինչո՞վ են զբաղված իր սկարի հերոսները:

Երեխայի սկարը ճիշտ «կարդալու» համար անհրաժեշտ է վստահել սեփական տպավորություններիս: Ինչպիսի՞ հույզեր են դրանք առաջացնում: Որպեսզի դրանք ճիշտ հասկանաք, պատկերը սկարագրելու համար օգտագործեք այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «լուսավոր»-«մութ», «պայծառ»-«խամրած», «հանգիստ»-«անհանգիստ», «ագրեսիվ»-«բարի», «հարուստ»-«աղքատ» և այլն: Օրինակ, տխուր է այն պատկերը, որի վրա ընտանիքի անդամները ցրված են սկարի տարբեր անկյուններում, նրանց դեմքերը տխուր են կամ ընդհանրապես

բացակայում են: Ազրեսիվ են այն նկարները, որոնցում դեմքերը կամ դիրքը ունեն սպառնալից արտահայտություն:

Եթե Ձեզ համար դժվար է նկարը ընկալելը, խնդրեք այլ մարդկանց բնութագրել նկարը: Յուրաքանչյուր կարծիք, որով կարելի է բնութագրել նկարը, կարող է նկարագրել երեխայի հոգեվիճակը:

Եթե բացասական կարծիքները չափից դուրս շատ են, ապա դա խոսում է երեխայի հոգեբանական անհավասարակշիռ վիճակի մասին: Սակայն միայն մեկ նկարի պատճառով շտապ որոշումներ կայացնել պետք չէ: Միգուցե երեխան պարզապես նեղված է:

Արդյո՞ք նկարի վրա պատկերված են ընտանիքի բոլոր անդամները: Առաջինն ու ամենախոշորը, սովորաբար, պատկերվում են երեխայի պատկերացմամբ ընտանիքի ամենակարևոր անդամները: Երեխաներն իրենց հիմնականում նկարում են այն մարդու կողքին, ում հետ ավելի սերտ են կապված: Նկարի ծայրերում գտնվում են այն հարազատները, որոնց երեխան ամենաքիչն է համակրում:

Սակայն պետք չի մոռանալ, որ երեխաների մոտ զգացմունքները ակնթարթային են: Օրինակ, երեխան չի նկարում հայրիկին, որը նրան քիչ ժամանակ է տրամադրում կամ կոպիտ է հետը: Իսկ նրա բացակայությունը երեխան բացատրում է «գործուղման է գնացել» արտահայտությամբ: Իսկ փոքրիկ քույրիկը նկարում չկա, քանի որ նա «հարևան սենյակում քնած է»: Երեխան չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ մայրիկը քրոջ պատճառով իրեն ավելի քիչ ուշադրության է արժանացնում, քան նախկինում: Նկարում նմանատիպ «ուղղումներ» երեխաները կատարում են ելնելով իրենց հուզական վիճակից: Նրանք ավելի շատ կարիք ունեն մեծերի բարի վերաբերմունքի և իրենց հասակակիցների հետ խաղերի:

Կարևոր մանրուքներ

Եթե նկարի վրա՝

- ընտանիքի անդամները հավաքված են ինչ-որ ընդհանուր բանի շուրջ, դա ընտանիքում բարենպաստ եղանակի գրավական է:
- երեխան իրեն նկարել է բոլորից առանձին, ապա դա ազդանշան է այն մասին, որ երեխան մեկուսացած է ընտանիքում: Ընտանիքի անդամները միմյանցից «պատնեշով բաժանված են», որն ընտանիքի ներսում անհաջող շփման հետևանք է:
- իրենից փոքր քրոջը կամ եղբորը երեխան նկարում է ավելի խոշոր

պլանով, ապա ըստ երեխայի «նա ավելի մեծ տեղ է զբաղեցնում նրանց կյանքում»:

– Նկարի վրա բացակայում է հենց փոքրիկ նկարիչը, ապա «ես տեղ չունեմ» հարազատների շրջապատում: Դա կարելի է ստուգել երեխային հարց տալով՝ «Միգուցե դու մոռացել ես ինչ-որ մեկին նկարել»: Բայց լինում են պահեր, երբ նույնիսկ ուղիղ տրված հարցը («մոռացել ես քեզ նկարել») երեխան անտեսում է կամ պատասխանում՝ «տեղ չկար», «հետո կնկարեմ»: Նման իրավիճակը ընտանեկան փոխհարաբերությունների մասին մտածելու առիթ է տալիս:

Նկարչունթյան ձևերը



- * Հաճախակի ուղղումներ – բարձր անհանգստության առաջին նշանները:
- * Նկարը բաղկացած է առանձին մանր գծիկներից – փոքրիկը կարծես թե վախենում է որոշիչ գիծը տանել, իսկ դա ևս վախի նշան է:
- * Բավականաչափ մեծ աչքեր ու խիտ ներկած բբեր – հևարավոր է, երեխան վախենում է ինչ-որ բանից:
- * Շատ զարդեր ու հագուստների վրա մանր դետալներ – նկատելի լինելու ցանկություն:
- * Մատիտի թույլ ուրվագիծ, ոչ տարիքային նկար – երեխան արագ հոգնում է, հուզական է, հոգեբանորեն՝ անկայում:
- * Գծերը մինչև վերջ տարված չեն, նկարը խառն է ու անփուլթ – երեխան իմպուլսիվ է: Երբեմն նկարը «չի տեղավորվում» թղթի վրա: Դա չափազանց էներգիայի, երբեմն էլ նույնիսկ ագրեսիայի նշան է:
- * Պատկերը կուտակված է թղթի մի անկյունում, ֆիգուրները շատ մանր են նկարված. երեխան չի հավատում իր ուժերին: Միգուցե, հարազատներից որևէ մեկը շատ խիստ է նրա նկատմամբ կամ երեխային

Ներկայացվող պահանջները նրա ուժերից վեր է:

* Ազրեսիայի նշաններ են մեծ, նկատելի բռունցքները, զենքը, սարսափազդու դիրքը, հստակ նկարված եղունգներն ու ատամները: Մեծերը պետք է փորձեն հասկանալ, թե ինչու է երեխան նման ուժ արտահայտել իր նկարում:

Ներկայակցը երեխայի հոգու հայելին է

Սովորաբար երեխաները նկարելիս օգտագործում են 5-6 գույն: Ավելի շատ գույներ օգտագործում են զգացմունքային, հուզառատ փոքրիկները: Ավելի քիչ գույներ օգտագործելը խոսում է տվյալ պահին երեխայի բացասական հույզերի մասին:

- Մուգ կապույտը արտացոլում է երեխայի ներքին խնդիրները, հանգստի կարիքն ու ինքնավերլուծումը:
- Կանաչ գույնը հավասարակշռության, անկախության, համառության, անվտանգության ձգտման գույնն է:
- Կարմիրն արտահայտում է կամքի ուժ, ազրեսիա, գրգռվածություն ու արտառոց վարք:
- Դեղինը դրական հույզերի, հետաքրքրասիրության ու օպտիմիզմի արտացոլումն է:
- Մանուշակագույնը երևակայություն ու ինտուիցիայի գույնն է:
- Շագանակագույնը դանդաղկոտություն է, ֆիզիկական դիսկոմֆորտ, հաճախ՝ բացասական հույզեր:
- Սևը արտահայտում է ճնշվածություն, բողոք, փոփոխության անհրաժեշտություն:
- Մոխրագույնը անտարբերության, մեկուսացման, հեռանալու ցանկության ու անհանգստության պատճառը տեսնել չցանկանալու գույնն է: